«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-253-04.05.2022-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն ընդհանուր առմամբ ընդունելի է համարում, սակայն առաջարկվում է վարչական իրավախախտում կատարած անձին վարչական տույժի վճարման 75 տոկոսից ազատելու արտոնություն տալ միայն այն դեպքում, եթե վերջինս դրա մասին ապացույցը ներկայացնի ոչ թե 48, այլ 24 ժամվա ընթացքում, քանի որ ներկայումս Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերում հնարավոր սեղմ ժամկետներում կարելի է կնքել ԱՊՊԱ պայմանագիր, ավելին դրա կնքումն այժմ հնարավոր է դարձել իրականացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ տարբեր բջջային հավելվածների, այդ թվում՝ հեռախոսազանգով ԱՊՊԱ պայմանագիր պատվիրելու միջոցով՝ վճարումը հետագայում կամ մաս-մաս կատարելու պայմանով ևս:

Բացի այդ, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության խախտումների համար վարչական տույժի գծով արտոնություններից ազատելու բոլոր իրավակարգավորումներով (տես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123-րդ հոդվածի 8-րդ մաս, 123.1-ին հոդվածի 5-րդ և 128-րդ հոդվածի 9-րդ մասեր) ժամկետ է նախատեսվում 24 ժամը:

Ավելին, մեր գնահատմամբ առավել երկար ժամկետ սահմանելու պարագայում կա հավանականություն, որ անձը՝ մոռացության հետևանքով, կարող է չօգտվել նախատեսվող արտոնությունից:

Միաժամանակ կարծում ենք, որ 48-ի փոխարեն 24 ժամի սահմանումն ըստ էության ամրապնդում է պետության ազդեցությունը ոչ իրավաչափ վարքագծի զսպման նկատմամբ: